




## ՄԻ ՕՐ ՍԱՆԱՀՆՈՒՄ



Իֆլիսից Սանահնի և Հաղ-  
բաթի հռչակաւոր վանքերը  
գնալու համար եթէ առաջ  
ստիպուած էինք երկու տմբողջ  
օր ճանապարհորդել այսանդից  
մինչև Շուլաւէր կառքով, իսկ  
այնտեղից լեռներով, անդնդա-  
խոր ձորերով ու ծմակներով  
ձիով, իսկ երբեմն նաև հետիոտս

գրեթէ մագլցելով այն նեղ ու դժուարանցանելի շուկո-  
ւերով, որոնք ձօճկանի մօտից և Խոթոռնիի տակով տա-  
նում էին դէպի այդ սրբավայրերը, Բագրատունեաց  
արքաների այդ սիրելի ամարանոցները, ալժմ, գոհու-  
թիւն Աստուծոյ, Կարս-Թիֆլիսեան երկաթուղին հասց-  
նում է նոցա սահմանը, մինչև Աշոտ մեծ թագակրի  
ժամանակուայ քարաշէն և ամրակառուց կամուրջը ճիշտ  
4<sup>1</sup>/<sub>2</sub> ժամուայ ընթացքում:

Երկու տարի չկայ դեռ, ինչ որ մի խմբակաւ, ու-  
ղեորութիւն էի կատարել այդ երկրում, և կարծես

միշտ աչքիս առաջն էր Սանահնի անդուգական և հրապուրիչ բնութիւնը, հետը միասին նաև հինաւուրց վանքի աւեր ու քարուքանդ վիճակը. երկու տարի չկայ դեռ, ինչ որ Հանդիսիս մէջ արածս նկարագրի մէջ ողբացել էի մեր վանքերի և յատկապէս Սանահնի վանքի արդի ողբալի կացութիւնը, և փափագում էի մի անգամ ևս տեսնել, միանգամ ևս հրաւիրել նորա վերայ բարեգործ անձանց ուշադրութիւնը. և օգտուելով ամառուան ազատութիւնից՝ փութացի կրկին այցելութիւն գնալ սիրածս սրբավայրին:

Ինչ թւում էր. թէ նախկին աւերակների վերայ բարդուած պիտի լինէին նորանոր աւերակներ, ժամանակը և մեր յատուկ անհոգութիւնը խած պիտի լինէին սեզանից հնութեանց այդ շտեմարանից դարձեալ քանի մի բեկորներ:

Երկաթուղին պատմական կամուրջի հանգէպ արդէն սկսել է երկու լուպէ կանգ առնել ճանապարհորդներ ընդունելու և իջնցնելու համար. և այդտեղից մինչև Սանահնի վանքը երկու ճանապարհ կայ. մէկը ուղղահայեաց, քարերի ու ժայռերի վերայով,  $1\frac{1}{2}$  վերստ երկարութեամբ, ուր գրեթէ մագլցելով երթեկեկում են գիւղացի երկու սեւի ժողովուրդը, ոտով և աւանակով. երկրորդը ոլորապտոյտ, 4 վերստ երկարութեամբ, որի մասին երբեմն լրագիրները հռչակեցին, թէ նախկին վանահայր և այժմ հանգուցեալ Վարդան վարդապետը կանոնաւոր խճուղի է շինել մինչև Սանահն, բայց որ հաստատ կարելի է ասել, թէ գրեթէ անտաւնելի մի քարքարոտ ուղի է աւելի վատ, քան ոտի ճոնապարհը: Զին անգամ խրտնում է այդ ճանապարհից. և ուղևորները բարւոք են համարում ոտով բարձրանալ այդտեղից, քան ձիով:

Մի կերպ հասանք Սանահնի վանքը:

Կեսանքը եռում էր այժմ վանքում: Մի քանի տասնեակ քարտաշներ, վարպետներ և մշակներ եռանդուն գործի վերայ էին. և նոցա հետ քլունգը ձեռքին՝ վանքի վանահայր տ. Գարեգին եպիսկոպոս Սաթուհեանը:

Իրտեցինք կատարուած և կատարուող նորոգութիւնները: Առայժմ աւարտուած էին. ա. տաճարի արևմտեան կողմի 9 սենեակների հիմնաւոր նորոգութիւնը. բ. մեծ՝ Փրկչի եկեղեցու կտուրի քարերն ամբողջովին փոխուած է. նորա մեծ գաւթինը նոյնպէս, մի մասը իւր հին քարերով, իսկ միւս մասը Ալէքսանդրապօլից բերած քարերով, գ. Լուսաւորիչ եկեղեցու կաթուղիկէի գլխին խաչ է դրուել, տանիքն ու կաթուղիկէի քանդուածները նորոգուել էր Ալէքսանդրապօլի քարով. դ. Աստուածածնի եկեղեցու տանիքը նորոգուել է խորասանիով. ե. առաջին գաւթի արտաքին պատը, որ շինուած էր խամ քարով, քանդուել և նոր քարից է շինուել. Փրկչի առաջին գաւթի անկիւնը, որ հեղեղներից քանդուած էինք տեսել, շինուած էր նոր քարերով. զ. եկեղեցու արևմտեան հրապարակը, որ հոյով ծածկուած էր առաջ, հողը վերցրած էր  $1\frac{1}{2}$  արշինաչափ, որի տակից դուրս էին գալիս զանազան, գեղեցիկ քանդակներով, սիւների պատուանդաններ, որոնք երկար ժամանակից ծածկուած են եղել հողի տակ: Դուրս էին գալիս նաև Վիթխարի գերեզմանաքարեր, որոնցից մէկի վերայ կարդացինք. «այս է հանգիստ պըն Վասակ տէր Սնահնյ». է. որպէս զի եկեղեցու ներսը նորոգելու ժամանակ արտաքին կողմից ապահոված լինի հեղեղից, եկեղեցու կաթուղիկէների արտաքին կողմից զամասկով ամրացած և քարագոյն իւղաներկ է քսուած. ը. եկեղեցու բոլոր կաթուղիկէներին նոր շրջութաներ են շինուած, որ լարմարութիւն լինի բարձրա-

նալու և կտրտած ու մաքրած է բոլոր տանիքներից ու կաթուղիկէներից այն բոլոր ծառերն ու բոյսերը, որոնք աճել էին անխնամ լինելուց. թ. նշխարախուցը, որ իւր գեղեցիկ ճարտարապետութիւնով համարոււմ է վանքի մատենադարանը, արտաքին կողմից նորոգուած է, բոլոր խախտուած քարերը փոխուել են. լսել ենք, որ կտուրի քարածածկը կմնայ առաջիկայ տարուան ցրտերի պատճառով. Ժ. Գրիգոր Մազիստրոսի ճեմարանի տանիքի ահագին ծառերը մաքրուած են և նոր կտուր է շինուած, այնինչ առաջ մեր տեսած ժամանակ կտուրի վերայ ոչ մի քար չէր մնացած: ճեմարանի փակուած դուռը բացոււմ է. Ժա. արդէն բացուած է արեւմտեան կամարակապ հոյակապ դռներն ու պատուհանները, որոնք կազմում էին սկզբում պաշտօնական մուտքը, բայց ժամանակի ընթացքում ցեխով ու քարերի կտորտոներով ծածկուած էին: Ժբ. եկեղեցու շուրջ դիզուած 3 արշինաչափ հողը արդէն սկսել էին քանդել և վերցնել: Վերջապէս հրաւիրուած էր մասնագէտ երկրաչափ ներքին կամրջից մինչև վանք նոր և կանոնաւոր շօսսէ բանալու 7 արշին լայնութեամբ, այդ ճանապարհի երկարութիւնը հաշուած է 2 վերստ և դիտաւորութիւն կայ սկսել այժմէնից, եթէ բարեգործ ազգայիններ չզլանան. իրանց օժանդակութիւնն այդ կարեւոր գործին:

Մենք աւելորդ ենք համարում դրուատել սրբազան վանահօր, քանի որ գործը ինքն իրան խօսում է, այլ կասենք միայն, որ Սանահնի վանքի այժմեան դրութիւնը այնպիսի միջիթարական և ախորժ տպաւորութիւն գործեց մեզ վերայ, որ վստահ կարող ենք ասել, թէ Ազգիս վեհաստիճան Հայրապետը առաւել լաւ ընտրութիւն չէր կարող անել այդպիսի մի նշանաւոր, և պատասխանատու գործի կատարումը սրբազան Սաթուհեանին յանձնելիս:

Երկաթուղու գծի Սանահնի ձորով անցնելը, վանքի այդ հիմնական նորոգութիւններն և կառուցանելիք խճուղին առանձին նշանակութիւն են տալիս այդ նուիրական երկրին: Սանահնը շրջապատուած է անտառապատ և խորաձոր լեռներով, առաջն ընդարձակ հօրիզոն և կլիման ոչ-խիստ բարեխառն: Երկրի այս գրութիւնը աչքի է ընկել արդէն շատերին և ամառանոց դարձնելու գիտաւորութիւն նկատեցինք տեղական իշխան-կալուածատէրերի մէջ, որոնք Սանահնի լեռնադաշտը կտրտել են մասերի և սկսել են վաճառել ցանկացողներին:

Սանահնի և առհասարակ Լօռուալ բնակիչները ապրում են նահապետական կեանքով. ունին իրանց լատուկ բարբառը, որ ուսումնասիրուած չէ և այդ բարբառով երգուած բազմաթիւ ժողովրդական երգեր, որոնցից մէկը գրի առնելով տալիս ենք այստեղ մեր ընթերցողին:

Մ = ճ է = ւ է է բ է

1) Իրակի օրերը կը փակեն դուքանին  
Խերով աշխատես գութանին  
Գութանն առաւ, ես կվարեմ հողերը  
Յորնով կլցնեմ հորերը  
Կկշտացնեմ աղքատի փոխերը  
Վութան, ես քու խերին մեռնիմ:

Տարին եկէին <sup>1)</sup> կըլի Լոռին կըզցէ դեր <sup>2)</sup>  
Լեզուն բաց արաւ խօսեց թեր  
Տարին եկէին կըլի կտամ մառ <sup>3)</sup>  
Միջումը խէր չիլի կզցէ բլբակ կառ <sup>4)</sup>

1) Անձրևով. 2) որոմն. 3) գութանի վերալ լցուելը. 4) բոլս.

Մաշկալըս պարտական ա մորթէ գառը  
Ուտէ քասըբի հետ խառը  
Գութան, ես քու խերին մեռնիմ:

Գութանի էչն ասաւ. քամակն կեռ ա աղագս դուզ ա  
Խոփն ասաւ. գետնի տակը կերթամ տեղս նեղ ա  
Մաճկալն ասաւ հօտաղնուն. հաց կերէք խաշիլ է եկել  
Կէս տեղը եղ ա

Ձերէն ասաւ. քամակումն է վեր տուած հայրքուց  
Շինած թուրը  
Տարէնն էրկու հետ կուգեմ իմ ծէրն իմ տիրոջ սուրը  
Գութան, ես քու խերին մեռնիմ:

Ճմրարակն ասաւ. ես եմ քառասուն օղը  
Էրկու ծէրս ա կեռը,  
Ինչք էք շալակս տուել էսքան բեռը.  
Սեծ ակն ասաւ. կնդումս ա վէր տուած տասներկու սօլը  
Մաշկալ ջան չալիչ արի, արած ցելդ գցես դօլը  
Տես ինչ տեսակ է լքցնում ցորնով գարով չօլը  
Գութան, ես քու խերին մեռնիմ:

Պուճուր ակն ասաւ. ես եմ երկու տարեկան տղա,  
աչքերս ա քու  
Դուք չը գիտէք, իմ տեղն ա չլմնուցը <sup>5)</sup> զօռ  
Ես կերթամ քարերին ծառերին դիպչելով ծղվալէ  
Հօտաղ ու մաճկալ ետեիցս դան ղլղալէ  
Գութան, ես քու խերին մեռնիմ:

Գումէշն ասաւ. ես մի կոշտ բան եմ  
Թօվէլ դալ կես գութանը մենակ կտանեմ  
Ֆօղի մնացածը ես մենակ կվարեմ կհանեմ  
Գութան, ես քու խերին մեռնիմ:

Սանձկեփ <sup>6)</sup> եղն ասաւ. դահրա <sup>7)</sup> քաշեմ  
Ճիպոտ տալիս շառ կքաշեմ

<sup>5)</sup> ամենքից. <sup>6)</sup> գութանի առջևի. <sup>7)</sup> հոգս.

Խորադա <sup>8)</sup> գումշին միուգանին <sup>9)</sup> կմաշեմ  
Գութան, ես քու խերին մեռնիմ:

Լուծն ասաւ. վեց տեղ ծակած եմ  
Միջումը չորս հատ սամին  
Ոչով չի կշտանալ իմ անուշ համին  
Մաճկալս պարտական ա իմաց անել բարեկամին  
Գութան, ես քու խերին մեռնիմ:

Լուծն ասաւ. ոչով բան չի հասկանալ  
Պօռօքը <sup>10)</sup> վրէս կը տաշէ  
Ուրաքի ըսխի հետ մեղքս կքաշէ  
Գութանի զալք եղն ասաւ. անց կկենամ ֆողի դմբուղը <sup>11)</sup>  
Կհաստացնեմ իմ տոռուղը  
Գութան, ես քու խերին մեռնիմ:

Հօրիքն <sup>12)</sup> ասաւ. ես ման կածեմ գութանը սարէ սար  
Իմ հախքն էլ կըլի բարեբար.  
Գութան, ես քու խերին մեռնիմ:

ԳԻՒՑ Ա. ԴԱՀ. ԱՂԱՆԵՍԱՆՑ



<sup>8)</sup> մեծ. <sup>9)</sup> սկզբից մինչև վերջ. <sup>10)</sup> լծան կէսը ծակած է, մէջը երկու փալտ է տուած և միջանկեալ տեղը շղթանաւ է պօռօքը. <sup>11)</sup> խամ տեղը. <sup>12)</sup>